ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

28.03.2023 Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատման մասին: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
3. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
4. Հաղորդում 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումներ նախապատրաստական աշխատանքների մասին:
5. Ֆակուլտետի 2023-2027 ուստարիների ուսումնական պլանների հաստատում:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Ա. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը,

ամբիոնում կատարված քննարկումների արդյունքները: Նա նշեց, որ ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2022-2023 ուստարվա սեպտեմբերից: Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը նշեց, որ տվյալ պահին ուսանողների մեծ մասի նախագծային աշխատանքները ավարտված են: Մասնագիտական պրակտիկայի ընթացքում հիմնականում կատարված են նաև հետազոտական աշխատանքները: Զեկուցողը կարևորեց պրակտիկայի ընթացքում հետազոտական աշխատանքով զբաղվելը և նշեց, որ դա բավականին նպաստում է ավարտական աշխատանքի ընթացքին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների ժամանակացույցների հաստատման կարգը: Նշվեց, որ հանձնաժողովի նախագահն է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ֆակուլտետի «Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման» ամբիոնի պրոֆեսոր Նունե Յուրիի Աղբալյանը: Վ. Աղաբաբյանը նշեց, որ դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը, ըստ նախնական պայմանավորվածության, նախատեսվում է անցկացնել մայիսի 20-ին: Զեկուցողը նշեց նաև, որ պետք է պաշտպանությունից առնվազը 2 շաբաթ առաջ մասնագիտական ամբիոնում կազմակերպել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը, ինչը սահմանված է ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման

կարգով: Զեկուցողը առաջարկեց ապրիլին կազմակերպել ավարտական աշխատանքների դիտում-քննարկում՝ հաշվի առնելով կրթական ծրագրի առանձնահատկությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

21.04.23թ. կազմակերպել ավարտական աշխատանքների նախնական դիտում-քննարկում, իսկ 20.05.23թ.՝ դիպլոմային աշխատանքների պաշտպանություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետի ուսանողները շատ պասիվ են եղել հարցման մասնակցության գործում: 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում հետազոտական աշխատանք իրականացրած 36 ուսանողներից հարցմանը մասնակցել է 5 ուսանող /8,9%/: Նշվածին հակառակ բավականին ակտիվ մասնակցություն են ունեցել հետազոտական աշխատանք ղեկավարած դասախոսները /6/5/: Զեկուցողը նշեց, որ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, ուսանողների կրթական կարիքների վերհանման շրջանակներում, հարցման միջոցով ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը: Հարցման նպատակն է եղել բացահայտել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ուսանողների մոտ ի հայտ եկած խնդիրները, հավաքագրել առաջարկներ հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման ուղղությամբ, ակտիվացնել ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և խթանել ուսանող – բուհ համագործակցությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Հ. ԱՍատրյանը, Ա. Չիբուխյանը, Դ. Չիբուխյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաներից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը: Զեկուցողը ներկայացրեց, որ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /ապրիլի 4-ից մինչև ապրիլի 8-ը/: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, մոտ մեկ ամիս փակցված են և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, Ա. Չիբուխյանը, Դ. Չիբուխյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում իրականացվող առկա ուսուցման

կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայման համար ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք, չնայած բավականին պասիվ են եղել, բայց ի վերջո մշակել են 2023-27 ուստարվա վերանայված ուսումնական պլանները: Զեկուցողը ներկաների քննարկմանը ներկայացրեց 2023-27 ուստարվա «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսպլաններում կատարած փոփոխությունները **(Հավելված 1)**:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀԴՄ անդամ Դ. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի 2023-27 ուսումնական պլանները:

2. «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսպլանում կատարված փոփոխությունները ներկայացնել ՈՒՄՎ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2022-2026 և 2023-2027 Դիզայն ԿԾ ուսպլանների համեմատական վերլուծություն									
2022-2026 ուսպլան					*2023-2027 ուսպլան*				
N	*առարկա*	*կրեդիտ*	*ժամա-քանակ*	*քնն.ձևը*	N	*առարկա*	*կրեդիտ*	*ժամա-քանակ*	*քնն.ձևը*
	Նկարչություն-1	9	8	Առ.եզր.գն.		Նկարչություն-1	9	6	Առ.եզր.գն.
	Նկարչություն-2	9	8	Առ.եզր.գն.		Նկարչություն-2	9	6	Առ.եզր.գն.
	Նկարչություն-3	11	10	Առ.եզր.գն.		Նկարչություն-3	9	6	Առ.եզր.գն.
	Նկարչություն-4	9	8	Առ.եզր.գն.		Նկարչություն-4	9	6	Առ.եզր.գն.
	Նկարչություն-5	8	8	Առ.եզր.գն.		Նկարչություն-5	9	6	Առ.եզր.գն.
	Նկարչություն-6	6	6	Առ.եզր.գն.		Նկարչություն-6	9	6	Առ.եզր.գն.
		52	**48**			Նկարչություն-7	6	4	Առ.եզր.գն.
							60	**40**	
	Գծագրություն և հեռանկար-1//Գծագրություն և հեռանկար-2	6	6	Առ.ընթս.		Գծագրություն և հեռանկար	9	6	Առ.ընթս.
	Պլաստիկ անատոմիա	2	2	Առ.եզր.գն.		Պլաստիկ անատոմիա	3	2	Առ.եզր.գն.
	Գունատեսություն	2	2	Առ.եզր.գն.		Գունատեսություն	3	2	Առ.եզր.գն.
	Նյութերի տեխնոլոգիա	4	4	Առ.ընթս.		Նյութերի տեխնոլոգիա	6	4	Առ.ընթս.
	Բիոնիկա և արխիտեկտոնիկա	4	4	Առ.եզր.գն.		Բիոնիկա և արխիտեկտոնիկա	6	4	Առ.եզր.գն.
	Կոմպոզիցիայի հիմունքներ և օրնամենտալ ոճավորում	4	4	Առ.եզր.գն.		Կոմպոզիցիայի հիմունքներ	3	2	Առ.եզր.գն.
	_____ _____	0	0			Օրնամենտալ ոճավորում	3	2	Առ.եզր.գն.

	Հետազոտության պլանավորում և մեթոդներ	2	2	Առ.եզր.գն.		_____ _____ _____	0	0	
	Քանդակագործություն-1, Քանդակագործություն-2	6	6	Առ.եզր.գն.		Քանդակագործություն	9	6	Առ.եզր.գն.
	Ապակենկարչություն	2	2	Առ.եզր.գն.		_____ _____ _____	0	0	
	Ժամանակակից արվեստի և դիզայնի պատմություն	2	2	Առ.եզր.գն.		Դիզայնի պատմություն	3	2	Առ.եզր.գն.
	Բրենդավորում	**2**	**2**	Առ.եզր.գն.		Բրենդավորում	3	2	Առ.եզր.գն.
	Արվեստի պատմություն -1	4	4	Առ.ընթս.		Արվեստի պատմություն -1	6	4	Առ.ընթս.
	«ՀԲ» Արվեստի պատմություն-2	6	6	Եզր.գն.		«ՀԲ» Արվեստի պատմություն-2	6	4	Եզր.գն.
	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -1	6	6	Եզր.գն.		Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -1	6	4	Եզր.գն.
	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -2	6	6	Եզր.գն.		Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավորում -2	6	4	Եզր.գն.
	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -3	6	6	Եզր.գն.		Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -3	6	4	Եզր.գն.
	Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -4	2	2	Եզր.գն.		Համակարգչային գրաֆիկա և եռաչափ մոդելավ. -4	6	4	Եզր.գն.
		20	**20**				**24**	**16**	
	Մակետավորում և աշխատանքնյութի վրա-1	6	6	Առ.եզր.գն.		Մակետավորում -1	6	4	Առ.եզր.գն.
						Աշխատանքնյութի վրա-1	6	4	Առ.եզր.գն.

	Մակետավորում և աշխատանք նյութի վրա-2	8	8	Առ.եզր.գն.		Մակետավորում -2	6	4	Առ.եզր.գն.
						Աշխատանք նյութի վրա-2	6	4	Առ.եզր.գն.
	Դիզայն նախագծում-1	4	4	Առ.եզր.գն.		«ՀԲ» Դիզայն նախագծում-1	6	4	Եզր.գն.
	«ՀԲ» Դիզայն նախագծում-2	6	6	Եզր.գն.		«ՀԲ» Դիզայն նախագծում-2	6	4	Եզր.գն.
	«ՀԲ» Դիզայն նախագծում-3	9	9	Եզր.գն.		Դիզայն նախագծում-3	6	4	Առ.եզր.գն.
	Ինտերիերի և էքստերիերի դիզայն	6	6	Առ.եզր.գն.		Ինտերիերի և էքստերիերի դիզայն	6	4	Առ.եզր.գն.
		25	25				24	16	
	Հագուստի նախագծում-1	4	4	Առ.եզր.գն.		«ՀԲ» Հագուստի մոդելավորում և նախագծում-1	9	6	Եզր.գն.
	«ՀԲ» Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա-1	6	6	Եզր.գն.					
	Հագուստի նախագծում-2	6	6			«ՀԲ» Հագուստի մոդելավորում և նախագծում-2	6	4	Եզր.գն.
	«ՀԲ» Հագուստի մոդելավորման կոմպոզիցիա-2	4	4	Եզր.գն.					
	Հագուստի նախագծում-3	5	5	Առ.եզր.գն.		Հագուստի մոդելավորում և նախագծում-3	6	4	Առ.եզր.գն.
						Տարազի պատմություն	3	2	Առ.եզր.գն.
		25	25				24	16	
	Ուսումնական պրակտիկա-1	2	0	Ստ.		Ուսումնական պրակտիկան	3	0	Ստ.
	Ուսումնական պրակտիկա-2	2	0	Ստ.		Մասնագիտական պրակտիկա-1	3	0	Ստ.
	Ավարտական աշխատանք	20	0	Պաշտ.		Ավարտական աշխատանք	12	0	Պաշտ.
	Մասնագիտական պրակտիկա-1	6	0	Ստ.		Մասնագիտական պրակտիկա-2	3	0	Ստ.

	Հարակից դասընթաց-1- 5 կրեդիտ					Հարակից դասընթաց-1- 5 կրեդիտ			
	Հարակից դասընթաց-2- 5 կրեդիտ					Հարակից դասընթաց-2- 5 կրեդիտ			
	Հարակից դասընթաց-3- 5 կրեդիտ					Հարակից դասընթաց-3- 5 կրեդիտ			

2022-2026 և 2023-2027 ուսպլանների համեմատական վերլուծություն

2022-2026 ուսպլան					*2023-2027 ուսպլան*				
N	***առարկա***	***կրեդիտ***	***ժամա-քանակ***	***քնն.ձևը***	**N**	***առարկա***	***կրեդիտ***	***ժամա-քանակ***	***քնն.ձևը***
	Նկարչություն-1	11	10	Առ.եզ.գն		Նկարչություն-1	9	6	Առ.եզ.գն
	Նկարչություն-2	11	10	Առ.եզ.գն		Նկարչություն-2	9	6	Առ.եզ.գն
	Նկարչություն-3	9	8	Առ.եզ.գն		Նկարչություն-3	9	6	Առ.եզ.գն
	Նկարչություն-4	9	8	Առ.եզ.գն		Նկարչություն-4	9	6	Առ.եզ.գն
	Նկարչություն-5	10	10	Առ.եզ.գն		Նկարչություն-5	9	6	Առ.եզ.գն
	Նկարչություն-6	6	6	Առ.եզ.գն		Նկարչություն-6	9	6	Առ.եզ.գն
		56	**52**				**54**	**36**	
	Գունատեսություն	2	2	Առ.եզ.գն		Գունատեսություն	3	2	Առ.եզ.գն
	Նյութերի տեխնոլոգիա	4	4	Առ.եզ.գն		Նյութերի տեխնոլոգիա	3	2	Առ.եզ.գն
	Գործվածքի գեղարվեստական ձևավորում-1	4	4	Առ.եզ.գն		Գործվածքի գեղարվեստական ձևավորում-1	6	4	Առ.եզ.գն
	Գործվածքի գեղարվեստական ձևավորում-2	4	4	Առ.եզ.գն		Գործվածքի գեղարվեստական ձևավորում-2	6	4	Առ.եզ.գն
	Գործվածքի գեղարվեստական ձևավորում-3	4	4	Առ.եզ.գն		Գործվածքի գեղարվեստական ձևավորում-3	6	4	Առ.եզ.գն
	Գործվածքի գեղարվեստական ձևավորում-4	4	4	Առ.եզ.գն		«ՀԲ» Գործվածքի գեղարվեստական ձևավորում-4	6	4	Եզր.գն.
	"ՀԲ"Գործվածքի գեղարվեստական ձևավորում-5	4	4	Եզր.գն.					
		20	**20**				**24**	**16**	
	Խեցեգործություն-1	4	4	Առ.եզ.գն		Խեցեգործություն	6	4	Առ.եզ.գն
	Խեցեգործություն-2	6	6	Առ.եզ.գն					
	Քանդակ և պլաստիկ մոդելավորում	4	4	Առ.եզ.գն		Քանդակագործություն	6	4	Առ.եզ.գն

Արվեստի պատմություն-1	6	6	Առ.ընթ.ս.		Արվեստի պատմությունին-1	6	4	Առ.ընթ.ս.
"ՀԲ" Արվեստի պատմություն-2	6	6	Եզր.գն.		«ՀԲ»Արվեստի պատմություն-2	6	4	Եզր.գն.
"ՀԲ" Զարդարվեստի կոմպոզիցիա	4	4	Եզր.գն.		Զարդարվեստի ոճավորում	6	4	Առ.եզ.գն
					Ապակենկարչություն	3	2	Առ.եզ.գն
Մետաղի գեղարվեստական մշակում-1	4	4	Առ.եզ.գն		Մետաղի գեղարվեստական մշակում-1	3	2	Առ.եզ.գն
Մետաղի գեղարվեստական մշակում-2	2	2	Առ.եզ.գն		Մետաղի գեղարվեստական մշակում-2	3	2	Առ.եզ.գն
Փայտի գեղարվեստական մշակում-1	4	4	Առ.եզ.գն		Փայտի գեղարվեստական մշակում	6	4	Առ.եզ.գն
Փայտի գեղարվեստական մշակում-2	4	4	Առ.եզ.գն					Առ.եզ.գն
"ՀԲ" Մանրանկարչություն-1	4	4	Եզր.գն.		Մանրանկարչություն-1	3	2	Առ.եզ.գն
Մանրանկարչություն-2	4	4	Առ.եզ.գն		"ՀԲ" Մանրանկարչություն-2	6	4	Եզր.գն.
Գծագրություն	4	4	Եզր.գն.		Գծագրություն	6	4	Եզր.գն.
Համակարգչային գրաֆիկա	4	4	Առ.եզ.գն		Համակարգչային գրաֆիկա	3	2	Առ.եզ.գն
Կամընտրական դասընթացներ								
ԴԿԱ պատմություն	5	4	Առ.ընթ.ս.		ԴԿԱ պատմություն	6	4	Առ.ընթ.ս.
Տարազի պատմություն	5	4	Առ.ընթ.ս.		Տարազի պատմություն	6	4	Առ.ընթ.ս.
Ապակենկարչություն	5	4						
Տիկնիկագործություն	5	4	Առ.ընթ.ս.		Տիկնիկագործություն	6	4	Առ.ընթ.ս.
Ապլիկացիա	5	4	Առ.ընթ.ս.		Ապլիկացիա	6	4	Առ.ընթ.ս.
Թանգարանային գործ և ցուցահանդեսային տեխնոլոգիաներ	5	4	Առ.ընթ.ս.		Թանգարանային գործ	6	4	Առ.ընթ.ս.
			Առ.ընթ.ս.		Ցուցահանդեսային տեխնոլոգիաներ	6	4	Առ.ընթ.ս.
					Գծանկարչություն	6	4	Առ.եզ.գն
					Գունանկարչություն	6	4	Առ.եզ.գն
					Համակագչային գրաֆիկա	6	4	Առ.եզ.գն
					Պլաստիկ մոդելավորում	6	4	Առ.ընթ.ս.

					Եռաչափ մոդելավորում	6	4	Առ.եզ.գն
					Գորգագործություն	6	4	Առ.ընթ.ս.
7-րդ կիսամյակ, «Շարժունության պատուհան»	15							
Դասընթաց-1	5				***Հարակից դասընթաց-1***	6	4	
Դասընթաց-2	5				***Հարակից դասընթաց-2***	6	4	
Դասընթաց-3	5							
Կրթական այլ մոդուլներ								
Մասնագիտական պրակտիկա	6	0	Ստ.		Մասնագիտական պրակտիկա-1	3	0	Ստ.
					Մասնագիտական պրակտիկա-2	3	0	Ստ.
Ավարտական աշխատանք	20	0	Պաշտ.		Ավարտական աշխատանք	12	0	Պաշտ.